ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 12. Հայցի հարուցումից առաջ ապացույցներ պահանջելը

1. Ուսումնասիրության իրականացման ընթացքում իրավասու մարմինը կարող է հավաքել օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող տեղեկություններ՝ սույն հոդվածով սահմանված կարգով:

2. Իրավասու մարմինը ձեռնարկում է ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված և գաղտնիք պարունակող տեղեկությունների պահպանմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումներ:

3. Իրավասու մարմինը կարող է դիմել առաջին ատյանի դատարան՝ ներկայացնելով նոտարական, բանկային, ապահովագրական կամ առևտրային գաղտնիք կազմող տեղեկություններ, «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքով սահմանված՝ ծառայողական տեղեկություններ (բացառությամբ «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված տեղեկությունների), վարկային տեղեկատվություն կամ վարկային պատմություն պահանջելու դիմում:

4. Դատարանը պահանջը քննում է առանց նիստ հրավիրելու և որոշում է կայացնում դիմումն ստանալուց հետո՝ յոթնօրյա ժամկետում: Դատարանի նախաձեռնությամբ՝ հավելյալ պարզաբանումներ ստանալու նպատակով կարող է հրավիրվել դատական նիստ, որի ժամանակի և վայրի մասին ծանուցվում է միայն իրավասու մարմինը:

5. Դատարանը որոշում է կայացնում հայցվող տեղեկությունները պահանջելու վերաբերյալ, եթե իրավասու մարմինը հիմնավորում է, որ տվյալներն անհրաժեշտ են ուսումնասիրության համար էական նշանակություն ունեցող փաստերի վերհանման համար: Դատարանի որոշումն ուղարկվում է միայն իրավասու մարմին:

6. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ դիմումը բավարարելու դեպքում առաջին ատյանի դատարանը կայացնում է ապացույցը պահանջելու մասին որոշում՝ նշելով այն ապացույցները, որոնք պետք է տրամադրվեն իրավասու մարմնին, և այդ ապացույցները տրամադրելու ժամկետը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև տրամադրման կարգը:

7. Դիմումը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել իրավասու մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության ~~վերաքննիչ քաղաքացիական~~ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարան (այսուհետ՝ ~~Վերաքննիչ քաղաքացիական~~ Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարան)՝ այն ստանալու պահից՝ յոթնօրյա ժամկետում, իսկ ~~Վերաքննիչ քաղաքացիական~~ Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի որոշումը կարող է բողոքարկվել Վճռաբեկ դատարան՝ ~~Վերաքննիչ քաղաքացիական~~ Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի որոշումն ստանալու պահից՝ տասնհինգօրյա

ժամկետում: Վերաքննիչ և վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու որոշումն ուղարկվում է միայն իրավասու մարմին:

8. Դիմումը բավարարելու մասին որոշումը կարող է բողոքարկվել անձի կողմից, որի տվյալների ստացման առնչությամբ կայացվել է դատարանի որոշումը: Դատարանի որոշումը կարող է բողոքարկվել ~~Վերաքննիչ քաղաքացիական~~ Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարան՝ այն սույն օրենքով նախատեսված կարգով ստանալու պահից՝ յոթնօրյա ժամկետում, իսկ ~~Վերաքննիչ քաղաքացիական~~ Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի որոշումը կարող է բողոքարկվել Վճռաբեկ դատարան՝ ~~Վերաքննիչ քաղաքացիական~~ Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի որոշումն ստանալու պահից՝ տասնհինգօրյա ժամկետում: Դատական ակտի բողոքարկումը չի կասեցնում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի ընթացքը:

9. Սույն հոդվածի 7-րդ և 8-րդ մասերի հիման վրա ներկայացված վերաքննիչ և վճռաբեկ բողոքները քննվում են առանց դատական նիստ հրավիրելու՝ միջանկյալ դատական ակտերի դեմ բերված բողոքի քննության՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով:

10. Ապացույցը պահանջելու մասին դատարանի որոշման հիման վրա իրավասու մարմինը կարող է դիմել և ստանալ որոշմամբ նախատեսված տեղեկությունները դրանք տիրապետող անձանցից:

11. Ապացույցը դատարանի որոշման մեջ նշված ժամկետներում իրավասու մարմին չներկայացնելու դեպքում իրավասու մարմինն ստանում է առաջին ատյանի դատարանի՝ ապացույց պահանջելու մասին որոշման հիման վրա կազմված կատարողական թերթ և այն ուղարկում է հարկադիր կատարման: Ապացույց պահանջելու մասին որոշումը կատարվում է անհապաղ՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

12. Անձինք, որոնք սույն հոդվածի հիման վրա տրամադրում են հայցվող տեղեկատվությունը, պարտավոր են պահպանել այդ տվյալների տրամադրման գաղտնիությունը և չբացահայտել ուսումնասիրության առկայության կամ տվյալների տրամադրման փաստն այլ անձանց, այդ թվում՝ իրենց հաճախորդներին: